

ԲՈՒՆ ԱԶԳԱԿՑԻՔՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ V ԴԱՐԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

(ազգակցության գոյաբանական հաղաթերությունների բառային առտահայտվածությունը)

ԳԱՅԱՆ ՀԱՎՈՐՅԱՆ

Ազգակցության տերմինները վաղուց ի վեր գրավել են լեզվաբանների ուշադրությունը և ներթափանցել են ամենաբազմաբնույթ ուսումնասիրությունների, որը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով. առաջին՝ ազգակցության տերմինները կազմում են ներքնապես համակարգված և արտաքինապես սահմանազատված իմաստային դաշտ, որի նկատմամբ նյութատկազմաբան է փորձարկել իմաստային վերլուծության լեզվաբանական զանազան մեթոդներ (բաղադրիչների վերլուծության մեթոդ, համընդհանուր լեզվաբանական կաղապար և այլն)։ Երկրորդ՝ ազգակցության տերմինները օժտված են մեծ կայունությամբ տարբեր լեզուներում, որի շնորհիվ կարևոր և արժեքավոր են համեմատական լեզվաբանության և լեզուների պատմության համար։ Երրորդ՝ ազգակցության տերմինները ցուցադրում են թե՛ մարդկային լեզվամտածողության ընդհանրություններ, թե՛ տվյալ լեզվով մտածողության առանձնահատկությունները, և դրանց ուսումնասիրությունը հաճախ նպաստում է ընդհանուր լեզվաբանության հանգուցային խնդիրների լուծմանը։ Չորրորդ՝ ազգակցության տերմինները վճռական դեր ունեն ընտանիքի և հասարակության կազմակերպության պատմության ուսումնասիրման հարցում։

Հայերենի ազգակցության տերմինների լիակատար և ամբողջական ուսումնասիրության հարցը մինչև օրս չի լուծված։ Համաժամանակյա իմաստային դասակարգումը ներկայացրել է ակադ. Գ. Զահուկյանը², ծագումնային շերտերը և նախադրային շրջանում որոշ տերմինների զարգացումը՝ Հ. Ասմանզուլյանը³, հայ-սլավոնական զուգաբանությունները՝ Լ. Սարաջևան⁴։ Հայերենի ազգակցության տերմինների համապարփակ ուսումնասիրությունը սկսելու պատճառով լավագույն իրավիճակ հայ գրի սկզբնավորման դարաշրջանն է՝ V դարը, մանավանդ որ ազգակցության անունների համակարգը ավանդված է կատարելապես, և հին հայերենի զարգացման հետագա շրջանները աննշան հավելումներ են բերում։ Առկա լեզվական նյութը նախընտրելի է կոչել ազգակցության տերմիններ, որոնցից տերմինները առարկայական մեկ հատկացվածություն ունեն (մանանշանակիչ են), կառուցվածքով և/կամ իմաստով պատճառարանված են տերմինների արժեք ունեցողները և արտահայտչականության են ձգտում հոմանիշները։ Տերմինները, տերմինի արժեք (այսուհետև՝ SU) ունեցող բառերը և հոմանիշները կազմում են բուն ազգակցության անունների իմաստային գերդաշտը և դասակարգվում են դաշտերում ըստ արտալեզվական շախմատ

¹ Г. Б. Джаукян, Опыт анализа терминов родства с применением универсальной лингвистической модели (УЛМ) («Известия АН СССР», 1982, № 1, серия «Литература и язык»); А. М. Кузнецов, Структурно-семантические параметры в лексике, М., 1980; L. W. Goodenough, Componential analysis and the study of meaning, «Language», 1956, v. 32.

² Г. Б. Джаукян, նշվ. աշխ.

³ А. А. Асмангулян, Этимологический состав терминов родства армянского языка («Научные труды Ер.ГПИ им. Брюсова», 1971, № 3); նույնի՝ История армянских терминов родства, Ереван, 1983.

⁴ Л. А. Сараджева, Генетическое соотношение армянских и славянских терминов родства («Очерки по сравнительной лексикологии армянского языка», Ереван, 1983).

⁵ Նոր բառերի Հայկազյան լեզվի» (այսուհետև՝ նշվ.), հ. 1, Երևան, 1979, հ. 2, 1981, Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, 1972, հ. 2, 1973, հ. 3, 1977, հ. 4, 1979:

նիշներին՝ արյունակցական և ձևաբանական (խնամական), առաջնային (անմիջական և առաջին աստիճանի միջնորդավորված) և միջնորդավորված ազգակցական հարաբերություններ:

ԱՐԻԱՋԻՆ ԻՄԱՍՍԱՑԻՆ ԴԱՇՏ. ամփոփում է Երեք առաջնային արյունակցական երկվորմ հարաբերությունները համապատասխան հակադիր եզրերի անվանումներով՝ ծնող (հայր, մայր), զուսակ (սուղի, ուստր, դուստր) և համածին (եղբայր, քույր): Եզրերի անվանումները ազգակցության տերմիններ ևն, հարաբերություններինը՝ ՏԱ բառեր:

ԵՐԿՐՈՐԴ ԻՄԱՍՍԱՑԻՆ ԴԱՇՏ. առաջնային միակ ձևաբանական ամփոփ հարաբերությունը, փոխադասող այլ և կին եզրերով, անվանվում է ՏԱ բառերով:

ԵՐԿՐՈՐԴ ԻՄԱՍՍԱՑԻՆ ԴԱՇՏ. երկրորդաբար միջնորդավորված արյունակցները անվանվում են ՏԱ բառերով, բացառություն՝ քեռի տերմինը: Մնող հարաբերությամբ միջնորդավորված ծնող հարաբերությունը արտահայտվում է հու, հան եզրերով: Համածին հարաբերությունը միջնորդավորվում է ծնող հարաբերության եզրերից յուրաքանչյուրով՝ հորեղբայր, հորաքույր, քեռի, մորաքույր: Զավակ հարաբերությունը միջնորդավորվում է նույնով՝ քոռն և համածին յուրաքանչյուր եզրով՝ եղբորեղի, քեռորեղի:

ՉՈՐԿՐՈՐԴ ԻՄԱՍՍԱՑԻՆ ԴԱՇՏ. երկրորդաբար միջնորդավորված ձևաբանական ազգականները անվանվում են տերմիններով, բացառությամբ՝ սկեսրայր, անեք, հարսն, փեսայ, քեռայր ՏԱ բառերի: Ամուսին հարաբերության յուրաքանչյուր եզրով միջնորդավորվում են ծնող և համածին հարաբերության եզրերը՝ սկեսրայր, սկեսուր, տայգր, տալ. անեք, զոքանչ, քեռի: Զավակ և համածին հարաբերությունների եզրերը միջնորդավորվում են համապատասխանորեն այլ կամ կին եզրով՝ նու (հարսն), փեսայ, քեռայր:

ՀՆՆԴԻՆԻՐԴ ԻՄԱՍՍԱՑԻՆ ԴԱՇՏ. երրորդաբար միջնորդավորված արյունակցներին անվանման գործուն եղանակը V դարում հարազատական բարդություն է (որդի մօրաքեռ): ՏԱ բառերով ևն արտահայտվում հորեղբորեղի, մորեղբորեղի, քոռնորդի եզրերը:

ՎԵՑԵՐԻՐԴ ԻՄԱՍՍԱՑԻՆ ԴԱՇՏ. երրորդաբար միջնորդավորված խնամքներից բառային արտահայտություն ունի միայն ամուսնու եզրեր կին եզրը՝ նեք ՏԱ բառով:

ՅՈԹԻՆԻՐԴ ԻՄԱՍՍԱՑԻՆ ԴԱՇՏ. չորրորդաբար միջնորդավորված արյունակցներից անվանվում է թոռան թոռ եզրը ձաքոռնեայ (քոռնեայ) ՏԱ բառով:

Միջնորդավորված ազգականները անվանվում են նկարագրական եղանակով, եթե անհրաժեշտ է ճշգրտություն (օր. որդի դստեր՝ քոռն) կամ շկա բառ-անվանում՝ սովորաբար երրորդաբար, չորրորդաբար միջնորդավորված ազգականներ (օր. այլ դստեր մօրաքեռ). կոչվում են փոխանվանաբար այն տերմինով, որով նրան անվանում է ավելի մոտիկ ազգականը՝ սովորաբար հարաբերության միջնորդ օղակը (օր. փեսայ՝ նույն այլ դստեր մօրաքեռ անվանման փոխարեն):

Իմաստային դաշտերի բոլոր հիմնական անդամները՝ տերմինները և ՏԱ բառերը ունեն հնդեվրոպական ծագում⁶, բացառությամբ շատագրանված անեք, զոքանչ⁷, փեսայ, զուսակ բառերի և ավանդված են դասական հայերենից՝ բացառությամբ քեռայր, տայգր, տալ, մօրեղբորեղի բառերի:

Հիմնական անդամների մեծ մասը բնորոշվում է կիրառական-երկրորդային նշանակություններով, արմատացած որպես բառիմաստի բաղադրիչներ կալում փոխաբերությունների շնորհիվ փոխաբերության հիմքը նշանակելի ուրե՛ օբյեկտիվ հատկանիշի ընդգծումն է՝ անվանելու համար մեկ այլ նշանակելի, որը լեզվում ունի առաջնային անվանում (օր. հայր «առաջնորդ» կամ մայր «սկզբնապատճառ»): Հակադարձ փոխաբերությունների (նշանակելի նույնպես օբյեկտիվ, բայց ոչ էական հատկանիշի առանձնացում իբրև անվանում, օր. որդի՝ ժառանգ, երեխայ) և փոխառությունների շնորհիվ իմաստային դաշտերը լրացվում են հոմանիշներով, որոնք տրվում են տերմինից հետո, եթե վերաբերում են միայն սովորաբար եզրին, և հարաբերության ջրն-նությունից հետո, եթե կենսաբանական սեռի իմաստատարերակում չեն կրում: Հիմնական անդամների լեզվական կատարյալ նկարագրության համար ներկայացվում են նրանց բառակազմական հնարավորությունները V դարում և համանունները (եթե կան): Հոմանիշները և կիրառական

⁶ Բառերի ծագումը ճշտված է ըստ «Հայերեն արմատական բառարանի» և հետևյալ աշխատությունների. Գ. Բ. Джаукян, Сравнительная грамматика армянского языка, Ереван, 1982; Լ. Ա. Сараджева, նշվ. աշխ.: Ա. Ա. Асмангулян, նշվ. աշխատություններ:

⁷ Անեք և զոքանչ բառերի ուղադրավ ստուգաբանություն է առաջարկում Հ. Ասմանգուլյանը (տե՛ս «История армянских терминов родства», էջ 9—21, 59—65):

նվաճի, զուտոր Սիոնի), իսկ միակ բաղադրյալը¹² ղստրիկ փաղաքականն է՝ ավանդված դա-
րավերից (Վրբ. հց.):

ՏԱ ունեցող գրավի բառը անվանում է հարաբերությունը զույգ եզրերով, երկրորդաբար նաև՝
հետևորդներ, զորմ, Խ տարբերություն ՈՐԴԻ բառի, չի ձգտում տերմինացման՝ ամենեին չի
կրում սեռային տարբերակման գաղափար¹³, ունի ավելի սահմանափակ կիրառություն և փոքրա-
թիվ բաղադրյալներ՝ 6 ածանցավոր, 4 բարդ և 4 բարդածանցավոր. անգլալեզուի, գալիսկաբար-
գալիսկալեռ, սակալազանակ, գալիսկալեզուրի, բարեգալիսկալեռի:

Հարաբերության եզրերի հոմանիշների մեծ մասը ընդհանուր է, միայն աղյիկ-տղյույ,
օրխուդ-սևպուռ բառերն են հակադրվում: սևոի հատկանիշով, Ըստ իմաստային ընդհանրություն-
ների հոմանիշները մասնավորում են երկու դաշտերում, որոնցից «սևուռն» իմաստային դաշտի
փոխարենարար գալիակ նշանակող բառերը խմբավորվում են երկու ենթադաշտերում. ա) սեռ,
սևուռն, սևուռնդ, ծնունդ, ծնուրի, եհա, զարմ յաջուրդ, շառախդ. բ) ժառանգ, ժառանգորդ,
խառնակ, պայազատ, սևպուռ, օրխուդ: «Մառնակ» իմաստային դաշտի անդամները բոլոր կիրա-
ռության նշանակում են գալիակ և խմբավորվում չորս ենթադաշտերում. ա) մառնակ, մատաղ,
համբակ, կացի, ետրածի, տղայ, աղյիկ. բ) դիեցիկ, ստնդի, կարեհարու, սառ. գ) բոյս,
բոյսու. գ) ողի, ողի աղեաց:

ԵՐԱՅԳ տերմինի կայուն փոխաբերական իմաստներն են՝ 2. արյունակից ազդական,
3. կրոնական ուշուրի անդամ, 4. ընկեր, մտերիմ, Բաղադրյալներում հանդես է դալիս ուղիւ ձևով
և 3. սեռ. հիմքով՝ Ավանդված են 6 ածանցավոր, 14 բարդ, 6 բարդածանցավոր կազմություն-
ներ՝ եղբայրուրի, եղբայրաճալ, եղբայրախի, ժողովեղբայր, եղբորուրի, եղբայրապանուրի են:
ԷՈՅՐ տերմինի կիրառական նշանակություններն են՝ 2. որևէ ազգականուհի, 3. բանաստեղ-
ծական ոճով՝ սիրած կին, 4. ուղեկից, արդյունք, 5. լուսնի հեթանոսական կոչումը (արեի
քույրը): Բաղադրյալներ կազմում է ուղիւ ձևից, եզ. սեռ հիմքից և հնչյունափոխ արմատից.
1 ածանցավոր, 7 բարդ, 2 բարդածանցավոր բառ՝ բուռական, քնալու, քալազի, քալախիսի-
րի:

Համաձին հարաբերության ՏԱ ունեցող անվանումը պահպանական հաճախակի (*<həðəzəɬ<
həðəzəɬ) փոխառությունն է, որը V դարում արդեն չի ընկալվում իբրև օտար բառ, քանի որ-
ա) ժողովրդական ստուգաբանությամբ համարվում է հայր բառից կազմված՝ հայրազատ (կիրդ.
ղէ-). բ) կիրառվում է ? ծնող, ազգական. մտերիմ, և 3. իսկական, ճշմարիտ իմաստներով. գ)
բաղադրյալներ է կազմում հայերենի բառակազմական կաղապարներով Ավանդված է 6 ածան-
ցավոր. անհաճախ, հաճախում, հաճախապես են:

Համաձին հարաբերության եզրերի հոմանիշները սեռային տարբերակում չեն կրում, պար-
տադր բաղադրյալ բառեր են, պարունակում են ընդհանուր և «ծնող» իմաստով բաղադրիչներ, որը
ակնհայտ արտահայտում է համաձինի առաջնային միջնորդավորվածությունը ծնող հարաբերու-
թյանը՝ Լիակալային անձի նկատմամբ. համասեռ, եղբայր, համածին, համածին, ծնողակից,
ծնողակից, արգանգակից են: Կառուցվածքով և իմաստով այս հոմանիշների հետ ընդհանրաբար
է հոնական գեղեցիկ փոխառությունը՝ ավանդված մեկ անգամ (Նիսր. ֆիլիպ.) փոխաբերական
հոգեհարազատ նշանակությամբ:

ԵՐԱՅԳ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏ

Ամուսին հարաբերության առաջին եզրը անվանվում է ՏԱ ԱՅՐ բառով, որի առաջնային
բանձ, տղամարդ իմաստի մասնավորումը հայերենում բացակա¹⁴ այր կենսաբանական անփո-

¹² Դուստր բուռի բառակազմական հնարավորությունների ծավալումը արգելակվել է-
ա) հասարակ անուններում՝ որդի բառի, բ) հատուկ անուններում՝ պհլ. քուխտ (duxht)
փոխառության բաղադրյալների մրցակցությամբ. գ) այլև նմանահունչ և համատեղ կիրառվող
ուստր բառի անձկոնությունը: Այս նախապայմանների վերացումից հետո կազմվում են որոշ
բաղադրյալներ (խոստովանաղուստր, քալազի են) միջին հայերենում:

¹³ Անվանման և ընկալման տարբերությունների պատճառով սեռային տարբերակում չկող
բառերը սովորաբար ընկալվում են իբրև արական եզրի անուն (քոռ, ժառանգ, ամուսին,
գալիսկ են):

¹⁴ Հնդեվրոպական հատուկ տերմին այր և կին եզրերի համար չկա: Ցեղակից լեզուներում
նշանակելիքները անվանվում են նկարագրական հղանակով (ամուսին, լծակից. հուս.
супруга-а, պհլ. hamrah, լա. uxor են) կամ այր և կին բառերով (այր, մարդ, էրիկ, կին-
դերմ. Mann, իսպ. mujer, հուս. жена, жена են):

փոխակի անունն է, կիրառվում է նաև «արի, բաշ» նշանակությամբ: Ունի շատ լայն բառակազմություն (ՇԶ ածանցավոր, 13 հարադրական, 13 համադրական բարդություն, 10 բարդաձանցավոր) բազմազան հիմքերով (ուղիղ և հեյլունափոխ ձևերով՝ արի—, վերջինիցս՝ արի—, արու—, ալլի կզ. և հոգն. սևռ., կզ. գործ. հիմքերով). անաբանց, աբամբի, առնաբառ, առուտ—ազույն, այրանալ, աբանց քաշ, առն լինել, այր ըստ առնել. այրենի, առնապատկերադործ, այրաւէր. առամայի, ւռնախօսութիւն, այրագոյութիւն են:

Հարաբերության հակադիր կզրի անունը նույնպես ՏԱ ունի՝ կին, առաջնային իմաստն է իզական ռեոի շափահաս անձ: ԱՅԲ բառի հետ կազմում է նաև երրորդ իմաստային հակադրությունը՝ փոխարիտական «թույլ, վատ» նշանակությամբ՝ միայն բաղադրալինիում (կնատ, կնամարի, կնատածործ): Ավանդված 20 ածանցավոր, 9 բարդաձանցավոր, 6 հարադրական և 20 համադրական բարդ կազմություններում հանդես է գալիս ուղիղ ձևով, կզ. և հոգն. սևռ., կզ. գործ. հիմքերով և հեյլունափոխ արմատով՝ տիկին, կանացի, կանամբի. կին արմատ, կին առնուլ, կնաման, Եօթնառնակին, Խանտիկեօրիւն են: Ուշադրության արժանի է եղար հոմանիշը, հավանաբար՝ Լրբերի տերմինի Միակ նշանակելին և նշանակությունն է կին կզյր, ստուգաբանված չի և լունի բաղադրալինի, վկայված է Երկու անգամ (Գիրք Պիտոյից), մինչդեռ ազգակցություն առաջնային տերմինները հույժ կիրառական են, հազվադեպ մոռացվող և սովորաբար հայտնի ծագմամբ, հետևաբար եղար բառը, ընայած իր մենիմաստությամբ, չի դիտվում տերմինի, քանի դեռ չկան նոր վկայություններ:

Բազմակնության օրինականության դեպքում հաճախ բառին ևս վերագրվում է ՏԱ՝ ունի իմաստային մասնավորում՝ Երկրորդական կին:

ՏԱ ունի հարաբերության անունը՝ ամուսին, որի կառուցվածքի բաղադրալությունը, ընկալվում է V դարում (ամ— «համատեղ» նշանակությամբ նախածանց,— ուս—ուսանել բայի արմատը,— ին անարդյունավետ ածականակերտ) և արտացոլվում բառի «հասակակից, ժամանակակից» կիրառական նշանակությամբ: Ինչպես տեսանք, առաջնային հարաբերությունների անուններում վերացսերված է կենսաբանական սեռի հատկանիշը: Բացառություն չի կազմում ամուսին բառը: Սակայն ամուսնակից (Ոսկ. ՏՀ.) և քաղմամուսին (Յիշատ.) բաղադրալիները հուշում են, որ բառը կրում է սեռային աղոտ տարբերակում ամուսնակից՝ հունարեն բնագրի կին բառի փոխարեն, և հատկապես «բազմայր» նշանակությամբ՝ քաղմամուսին), որը մասամբ ավարտվել է ժամանակակից հայերենում. ամուսին բառը վերածվել է տերմինի այր կզրի համար, մինչդեռ բաղադրալիները վերաբերում են զույգ եզրերին (ամուսիններ, ամուսնեալ, ամուսնություն):

V դարից ավանդված են ամուսին բառի 6 ածանցավոր, 2 բարդ, 3 բարդաձանցավոր կազմություններ. ամուսնաւոր, ամուսնացուցանել. ամուսնաւէր են:

Ըստ իմաստային զուգորդման ընդհանրությունների հոմանիշները բաժանվում են երեք խմբի. ա) կող, կուշտ. նախապես արտահայտել են միայն կին եզրը (Նվան՝ Աղամի կողից ստեղծված՝ Աղամի կինը և ընդհանրապես կանացի սեռի առաջին ներկայացուցիչը)¹⁵, կողակից բաղադրալի ազդեցությամբ ընդհանրացել են զույգ եզրերի համար. բ) համատեղության դադափսր արտահայտող բաղադրալ բառեր (Շգրութիւն» և «Նուլն» իմաստով պարտադիր բաղադրալներով)¹⁶, կողակից, զուգակից, հալագոյոյ, կենակից, կենաց կցոյոյ. լծակից. ամուսնակից. անկողնակից. գ) փեսայ, հառն բառերը անվանում են այր և կին եզրերը ամուսին հարաբերությունը ձևոր բերելու վիճակում:

ԵՐՐՈՐԴ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏ

ՀԱԻ բառը ՏԱ ունի որպես զույգ նշանակելիների՝ հոր հայր և մոր հայր, առաջնային անվանում: Փոխանվանաբար նշանակում է նախնի, նախորդ որն է սերնդի ծնող, այս իմաստն ունեն նաև նրա երկու բաղադրալները՝ հալակիցը, սկզբնաձև: Բառը ռեոի երկու համանուն՝ թուոն և կզր, սկիզբ նշանակությամբ: Վերջինս ժողովրդական ստուգաբանությամբ նույնացել է ՀԱԻ ՏԱ բառի հետ, ներկայացվում է ՆՀԲ նույն բառահոլովածում: Իմաստային զուգորդումը թափանցիկ է՝ նախնի, հետևաբար և ծագող հնութեան, սկիզբնաձև: Այս համանունն որոշ բաղադրալա-

¹⁵ Առաջին՝ Աղամի կին իմաստային զուգորդմամբ հետագայում կազմվել է կողաբաղադրալ, իսկ ընդհանրապես կին զուգորդմամբ ավանդված են կողաբայ, կողածնալ, կողածին, կողամարդ, կողատեղծ բաղադրալները:

¹⁶ Համեմատել ծան. 14-ի տվյալների հետ:

ներ տարբերվում են միայն կոնտեքստում՝ հաւանալ, բարեհաւ, նախահաւակ են:

ՀԱԻ հարաբերության հոմանիշները նկարագրական հարադրություններ են՝ հայր հօր, հայր մօր, մեծ հայր: Պահլավերենից և հունարենից փոխառյալ նույնահունչ պապ հոմանիշը ժամանակի ընթացքում կերտել է երկու համանուն՝ պապ՝ մեծ հայր, մարմնավոր և մեծ հայր, հոգևոր (մասնավորապես Հոռոմի հայրապետը): Պապ բառը V դարում սակավ կիրառական է, բաղադրությանը չունի:

ՀԱՆ բառը նույնպես ՏԱ ունի, որպես հոր և մոր մայր կրերի ընդհանուր անվանում, իսկ փոխանվանական մեծ մայր իմաստով նախորդ բառի պես հատվում է ճեպխնիս իմաստային դաշտի հետ: Հավասարապես կիրառական են փաղաքականները՝ հաւնի (անցել է վրացերենին՝ նախնին իմաստով) և հաւնիկ. այլ բաղադրյալներ չունի: V դարից ավանդված է նախամամ (հանուն):¹⁷ Բաղադրյալը և միայն XII դարից մամ (հունարեն մայր բառի փաղաքականը) բառը՝ հան իմաստով, նախամամ բառը հունարենից փոխառվել չէր կարող (նախա— բաղադրիչը չկա հունարենում): Ուրեմն: V դարում մամ բառը փոխառված է, ավելի սակավ կիրառական է, քան արական սեռի պապ համարժեքը և չի ավանդվել:

ՔՈՒԻ տերմինը ՀՐ. Աճառյանը մեկնում է քույր բառի սեռականով, Գ. Զահուկյանը ենթադրում է ինքնուրույն զարգացում հնդեվրոպական *sue-պոլարային՝ ձեռք: Ո՛ր ստուգաբանությունն էլ ընդունելու լինե՞ք, բառը կրում է մայրիշխանության հետքեր՝ եղբայրը անվանվում է որպես քույրը վերաբերող անձ (քեռ-ի, -ի ածականակերտով), կամ մոր եղբայրը յուրային է՝ արյունակիր, Միջնդեռ ազգակցությունը հոր կողմից մեկում է անորոշ: ՀՐ. Աճառյանը գտնում է, որ նշանակելիս անվտնջել է նաև նկարագրական բաղադրյալով՝ պատահամբ միայն չավանդված, քանի որ կա մօրեղբորորդի բառը (ՊԼ): Սակայն մեզ օրինակափ է թվում թե՛ մեկի գոյությունը և թե՛ մյուսի բացակայությունը. ա) իսկ մօրեղբայր տիպի բաղադրյալներ կան V դարում (հօրեղբայր, մօրաբայր, քեռայր), նշանակելիս ունի հատուկ տերմին և նկարագրական անվանման անհրաժեշտություն չկա. բ) բարձր հաճախականությամբ բնորոշվող ազգակցության տերմինի պատահամբ չավանդվելը անհավանական է անգամ մեկ հարյուրամյակի զրականությունից, իսկ մօրեղբայր չի վկայված V—XVII դդ. զրականությունից (նշԲ չունի). գ) քեռու որդի նշանակելիս պետք է անվանվեր միջնորդավորման բոլոր եզրերի համադրությամբ՝ մոր եղբոր որդի, հակառակ դեպքում նույնանում է քրոջ որդի նշանակելիս հետ՝ քեռորդի:

ԹՈՒՆ ՏԱ բառը յուրահատուկ է որպես հարաբերությամբ միջնորդավորված հարաբերության անուն¹⁸, այսինքն վերաբերում է չորս նշանակելիների, որոնց հարադրական նկարագրությունները բառի հոմանիշներն են՝ դուստր ուղույ, ուստր դստեր, ուղիք դստեր են: ԹՈՒՆԱՅ ՏԱ բառը իր նշանակություններից մեկով՝ թոռուհի, սեռային հակադրություն է կազմում ԹՈՒՆ բառի հետ, որի շնորհիվ զատվում են միջնորդավորված զավակ հարաբերության հակադիր եզրերի անվանումները: Սակայն ԹՈՒՆ բառը անկախ կիրառությամբ սեռային տարբերակում չի կրում¹⁹: Զավակ հարաբերության և համապատասխան եզրերի անունների պես փոխանվանաբար նշանակում է զարմ, սերունդ, հետնորդներ: Ավանդված են մեկական ածանցավոր, բարդ և բարդաձանցավոր կազմություններ՝ բռոնեայ, բռոնորդի, ձագբռոնեայ:

Դաշակ մյուս անդամները հատկացուցիչ-հատկացյալ կաղապարով կառուցված ՏԱ բառերն են՝ մօրաճոյր, հօրեղբայր, հօրաճոյր (ավանդված է նաև բարբառային երանգ կողո՛ հօրճոյր (ՊԼ) տարբերակը), եղբորորդի, քեռորդի: Այս ՏԱ բառերի առարկայական հատկացվածությունը որոշվում է բաղադրիչների մենա- կամ բազմանշանակելի լինելով: Այսպես, առաջին երեք բառերը անվանում են մեկ նշանակելի, չունեն կիրառական իմաստներ և ինքնուրույն բաղադրյալներ (հօրեղբորորդի՝ կաղապարի ծավալումն է).— որդի բաղադրիչ ունեցող բառերը նրկնշանակելի են և կազմում են փաղաքական ձևեր. եղբայր տերմինը պայմանավորում է եղբորորդի բառի փոխանվանական կիրառությունը՝ հօրեղբորորդի, քեռորդի, մտերիմ, կաթնեղբայր նշանակություններով:

¹⁷ Եթե հետագա հավելում չէ:

¹⁸ Թոռն բառը հետաքրքիր է նաև որպես իմաստային բաղադրիչ զուգաբանություն հայերենում. հնդեվրոպական համապատասխան արմատը (*tor-no) չի արտացոլվել որպես ազգականի անուն որևէ ցեղակից լեզվում (հմմտ. հուն. τέρας քնքուշ, մատաղ, հ. հնդ. taruna երիտասարդ, tarṇa ձագուկ, հորթ. արմատի ստորին ձայնադարձից՝ *t-mo հայերեն թարմ բառը):

¹⁹ Տե՛ս Ժան. 13:

ՉՈՐՐՈՐԴ ԽՄԱՍՏԱՆԻՆ ԴԱՇՏ

ՍԿԵՍՈՒՐ տերմինը հայերենի դասական շրջանից իսկ վկայված է առանց սկզբնահնչյունի՝ րարբառային երանգով՝ կեսուր (ծննդ.)։ Միակ հոմանիշն է մայր փոխանունը, ամուսին հարաբերությամբ միջորդավորված մյուս տերմինների պես շունի բաղադրյալներ և կիրառական նշանակություններ։

ՍԿԵՍՐԵԱՅ տերմինը սակավ կիրառական է, V դարում արգեն գուրս է մղվում՝ կիրառությունից, փոխարինվելով ՍԿԵՍՐԱՅՐ ՏԱ բառով (սկեսուրի այր), սկսվել է վերջինիս կառուցվածքային սևրտաճուր (հոմատ. սկեսուրայր) թեք ձևը. ՍՅՐ Ա թագ. դ. 21) և վերածումը տերմինի՝ Հոմանիշ՝ հայր փոխանունը։

ՏԱՅԳՐ տերմինի հնագույն վկայությունը ըստ ՆՁՐ և Արամատական բառարանի տալիս ձևն է (տոր.)։ Հավանաբար բառարանները ներկայացնում են ոչ հնագույն վկայությունը, Նույնը պետք է առկա ՏԱ տերմինի մասին, որի միակ վկայությունը ՆՁՐ տալիս է XIII դարից (Երզն.)։ Այս և հաջորդ տերմինները բնորոշվում են կիրառական իմաստների, բառակազմական նշանակությունների և հոմանիշների բացակայությամբ։ Համանուն տալ բայը շփոթելի չէ։

ՓՆՆԻ տերմինը ստույգ հնգվերոպական ծագում ունեցող միակ բառն է՝ կին եղբոր միջնորդավորված ազգականների անուններից։

ՉՈՐԱՆՏ միանշանակ տերմինը ստուգաբանված է²⁰։

ԱՆՆԻՐ՝ ՏԱ բառը անվանում է կնոջ հայր և կնոջ եղբայր եղբրեր, ունի նաև հավաքական՝ կնոջ ընտանիք, աներանք իմաստը, որը բխում է բառի նշանակելիքներից, Եթե աներ են կոչվում ընտանիքի արական սեռի ներկայացուցիչները, ապա և ընտանիքը կարող է կոչվել աներ։ Ավանդված է մեկ ածանցավոր՝ աներանալ²¹։

ՆՈՒ տերմինը անվանում է որդու կին եղբր, փոխանվանաբար՝ մոտիկ (ընտանիքի սահմաններում) արյունակցի կին։ Բաղադրյալներ չունի. հոմանիշ՝ հարսն։

ՀԱՐՍՆ ՏԱ բառի առաջնային նշանակությունն է՝ ամուսնացող, ամուսնության խորհուրդն ընդունող կին։ Որովհետև կամ որե՛նչ այլ ազգականի կին իմաստը սերտորեն կապված է ստուգաբանական իմաստի հետ՝ հնգվերոպական *ՐԳԿ՝-հարսնել, խնդրել արմատից, առկա են հարսնելիքներն ինքնուրույն զարգացման արդյունք է և զուգահեռներ չունի ցեղակից լեզուներում։ Թեև ՀԱՐՍՆ բառի նշանակելիքն անվանվում է ՆՈՒ տերմինով, մի շարք հանգամանքներ նպաստել են վերջինիս դուրս մղմանը կիրառումից. ա) հարսն բառի բազմիմաստությունը ինքնին բարձրացնում է նրա կիրառելիությունը նույն համեմատ (հարսն բառը կիրառվում է նաև հարսնացու, նորաստեղծ իմաստներով, փոխաբերաբար՝ հավերժահարս, ոգի). բ) նույն կոչում են նեղ ընտանեկան շրջանակում, իսկ հարսն՝ բոլոր ազգականները. գ) փեսայ բառի հետ իբրև հակադրի եղբր անուն կիրառվում է հարսն (նույն տերմինի արական սեռի իմաստային զործնական համարժեքը չիա, տեսական համարժեքը՝ հուր բառը, կիրառումից դուրս է եկել նախքան V դարը). դ) նույն բառի կարճությունը և բառակազմական հնարավորությունների բացակայությունը վկայում են նրա մաշվածությունը, իսկ նշանակելիքի վերաբերող հասկացությունները արտահայտվում են հարսն բառի բաղադրյալներով, որոնք պարունակում են ամուսնությանը առնչվող որոշ ազգագրական պատկերացումներ։ Բաղադրյալներում հանդես է գալիս ուղիղ ձևով և հարսան-հիմքով (հոգն. սեռ. հիմքը առանց հղովակերտի)։ Ավանդված է 7 ածանցավոր, 5 բարդ բառ. հարսանիք, հարսնաբան, հարսնեղբայր, հարսնագլխու, հարսնապանակ և այլն։

ՓՆՍԱՅ ՏԱ բառը անվանում է նմանահունչ և համատեղ կիրառելի ՀԱՐՍՆ բառի արական սեռի նշանակելիքներ՝ փեսա, փեսացու, նորափեսա, դստեր այր, փոխանվանաբար՝ ազգականահուն ամուսին։ Միանշանակելի հուր հոմանիշը իր սուղ հաճախականությամբ (երկու վկայություն՝ Փիլ. լին. էջ 187) չի կարող տերմին կոչվել (հոմատ. եղաբ)։ ՓՆՈՒԱՅՐ հոմանիշը ՏԱ ունի, միանշանակելիությունը պայմանավորված է բաղադրիչներով, ներկորդային է ՓՆՍԱՅ-ի համեմատ նաև ալիլի սահմանափակ (թեև ճշգրիտ) նշանակության տեսակետից։

ՓՆՍԱՅ բառի բաղադրյալները նույնպես արտացոլում են որոշ ազգագրական պատկերացումներ։ Ավանդված են 7 ածանցավոր, 3 բարդ և 2 բարդածանցավոր կազմություններ. փեսալու, փեսայանալ, փեսամուտի, փեսայանու, փեսայաժող։

²⁰ Տճ. ս. Ժան. 6։

²¹ Հր. Աճառյանը աներ բառից կազմված է համարում նուև աներ կիրանանու կամ կիրանանանան բաղադրյալները՝ կիրանանի դիմաց գտնվող մի սարի անուն՝ երկրորդ կիրանան («Հայերեն արմատական բառարան», հ. 1, էջ 192)։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏ

Հօրեղբորդի, մօրեղբորդի, քոնուհիք նկարագրական անվանումները **ՏԱ** ունեն,— որդի բաղադրիչի շնորհիվ վերաբերում են երրորդաբար միջնորդավորված զավակ հարստության զույգ եղբրին։ Փոռնորդի բառը նաև առաջին բաղադրիչի շնորհիվ անվանում է ուրիշ նշանակելի։

ՎՆՑԵՐՈՐԴ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏ

ՆՇՐ Բառը **ՏԱ** ունի՝ անվանում է տազեր կին և ամուսնու երկրորդ (միաժամանակյա) կին եղբրեր, որոնք **V** դարի հասարակական պատկերացումներով բոլորովին տարբեր հարաբերություններ են²²։ Բառի նշանակելիների անհամատեղելիությունը՝ շփոթելի համանունների կերտման հալոնականությամբ, նրա կիրառումից դուրս գալու ամենակարևոր նախապայմանն է, որին նպաստել են նաև լեզվական անճկունությունը (բաղադրյալներ չունի) և նկարագրական բնկույնի անվանումների կառուցման հնարավորությունը։ Ունի երկու համանուն. քաղցնական ժամանակի միավոր, դար նշանակությամբ և **V** դարից հետո անկախորեն չկիրառվող ճենթա, մեջո նշանակությամբ (ներքին, ներածական, ներանձնացնել են)։

ՑՈՔԵՐՈՐԴ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏ

ՁԱԴԹՈՒՆԵԱՅ (գրված նաև ձագրոռայ) **ՏԱ** բառը անվանում է չորրորդաբար միջնորդավորված զավակ հարաբերության բոլոր 16 եղբրեր, առանց միջնորդավորման կամ նշանակման որևէ կերպի ընդգծման։ Հետաքրքիր է ձագ- բաղադրիչի օգտագործումը ելակետային անձի նկատմամբ խիստ մանկահասակ՝ իմաստի արտահայտման համար. այս բաղադրիչի, աղելի լիշտ՝ հատկացուցիչ-հատկացյալ կաղապարի շնորհիվ **ՁԱԴԹՈՒՆԵԱՅ** բառը որոշակիորեն վերաբերում է թոռան թոռ նշանակելին, իսկ **ԹՈՒՆԵԱՅ** (գրված նաև քառնիսլ) հոմանիշը կառուցվածքով կայուն հատկացվածություն չունի և այս պատճառով կիրառվում է որպես երձք տարբեր նշանակելիների անվանում՝ ա) աղջիկ թոռ (տե՛ս երրորդ իմաստային դաշտը), բ) թոռան թոռ, գ) թոռան թոռան թոռ (**XIV** դ., **Տաթև.**)։

Այսպիսով, բուն ազգակցության անունների իմաստային գերդաշտը կամ ազգակցության գոյարանական հարաբերությունների բառային արտահայտվածությունը կարելի է ներկայացնել կենտրոնախոյս մարդը շրջանակների ձևով՝ ելակետային անձից հեռանալուն համեմատ աճում է եղբրերի և նվազում համապատասխան բառ-անվանումների քանակը։ Այսպես, առաջնային 4 հարստությունների 8 եղբրերի համար **V** դարի հայերենը ունի 7 տերմին, 6 տերմինը արժեք ունեցող բառ, առաջին և երկրորդ դաշտերը՝ հոմանիշներով, պարունակում են մոտ 60 բառ. երկրորդաբար միջնորդավորված 16 հարաբերությունների 28 եղբրեր անվանվում են 8 տերմինով և 12 **ՏԱ** բառով, երրորդ և չորրորդ դաշտերը, հոմանիշները ներառյալ, պարունակում են մոտ 30 բառ։ Սրբորդաբար միջնորդավորված 32 հարաբերությունների 64 եղբրերից անվանվում են միայն 13-ը՝ **ՏԱ** 4 բառերով, իսկ չորրորդաբար միջնորդավորված 64 արյունակիցներից՝ ընդամենը 16 եղբր՝ նույն ձագթոռնեայ բառով։

Ազգակցության առաջնային հարաբերությունների արտալեզվական որոշիչ դերը և կարևորությունը արտահայտվում է նախ և առաջ բառ-անվանումների գերակշռող քանակով. յուրաքանչյուր եղբրին համապատասխանում է մոտ 7,5 բառ, մինչդեռ երկրորդաբար միջնորդավորված յուրաքանչյուր եղբրին՝ մոտ 1,5 և երրորդաբար միջնորդավորված յուրաքանչյուր եղբրին՝ մոտ 0,07 բառ։ Առաջնային հարաբերությունների կարևորության լեզվական մյուս արտահայտությունը համապատասխան անունների արմատապես տարբեր որակն է՝ բնութագրելի հետևյալ չափանիշներով. ա) բուսականական հնարավորությունների, բ) փոխաբերական-փոխանվանական կիրառության, գ) հոմանիշների, դ) իմաստային շրջապատում համակարգվածության առկայություն։ Այս չափանիշները բառերի լեզվական կայունության²³ ցուցիչներ են միաժամանակ՝ բնութագրում են հին հայերենից գրված անփոփոխ մեզ հասած առաջին, երկրորդ, մասամբ երրորդ իմաստային դաշտերի հիմնական անդամներ և չորրորդ դաշտի հաջորդ, փնտայ բառերը։ Տերմինի անկախությունը նպաստում են. ա) բառի կարճությունը, մաշվածությունը. բ) բառակազմական հնարավորությունների բացակայությունը, իսկ հուղվման հարադուրյի վերափոխումից հետո՝ բազ-

²² Բառիմաստը պահպանում է հնագույն խմբական ամուսնության հետքեր (egc-ի կինը միաժամանակ ego-ի եղբոր կինն է)։

²³ Բառի լեզվական կայունության ամենակարևոր նախապայմանը՝ նշանակելիի արտալեզվական կայունությունը, հատուկ է գոյարանական բոլոր եղբրերին, անշուշտ, եթե չի փոխվում ազգակցության իրական համակարգը։

նաղան հիմեերով բաղադրյալներ կազմվելը. գ) մրցակից համանիշների և համանունների լիզված-
կան հերթանությունը (հմմտ. այր, եղբայր, ուստր, հոր, նու, ներ, հաւ, հան, լոռնեայ, ձուգրոռնեայ):

Կայունության տեսակետից առանձնանում է շորրորդ իմաստային դաշտը²⁴, որի անդամները բառիս բուն իմաստով տրամիներ են և աննշան փոփոխություններ են կրել V դարից ի վեր (նու տերմինի ելքը կիրառությունից և անհրաժեշտ SU բառի կառուցումը): Իմաստային տեսակետից դաշտը մեկուսացված է արտաքին՝ բառապաշարային, մակարդակից, ներքին առնչությունները, ազգական իմաստային ոլորտի հետ որոշվում են «ձևաբերովի ազգական» հատկանիշով: Առա-
ջին, երկրորդ, մասամբ երրորդ, իմաստային դաշտերը բնութագրվում են ռազմանայից (կարևոր, սկզբնազատեալ, աբաբիշ, մարգ, աղյուսեհ են) և փոխհասկող (նախնի, սերունդ, մանուկ, վրեժակակից են) դաշտերի առատություններ, արտահայտելով «ազգական» իմաստային ոլորտի առնչությունները բառապաշարային մակարդակում, որն առանձին բնության նյութ է:

Հատուկ բնություն է պահանջում նաև ազգակցության անունների բաղադրյալների իմաստային դասակարգումը, որը որոշում է «ազգական» իմաստային ոլորտի մյուս դաշտերի դեմը (ազգակցության երկրորդային՝ իրավա-բարոյական, կրոնա-ազգագրական ձևերում, լեռնաբանում բոս ազգակցության հակադիր եզրի դաշտային և բացակայության, թեկնածություն):

ТЕРМИНЫ РОДСТВА В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ V ВЕКА (словесное выражение онтологических отношений родства)

ԴԱՅԱՆՔ ԱՌՈՅԱՆ

Р е з ю м е

Обзор терминов родства (հայր, մայր, որդի, դուստր, ուստր, եղբայր, քույր, հեղ, սկիստր, ապից, տալ, զոխանշ, հեղի, նու) слов, имеющих значимость (статус) термина родства (ծնող, զաւակ, հարազատ, ամուսին, հաւ, հան, հորեղբայր, մորաքույր, բոռն, եղբորդի, հեղորդի, հարսն, փեսայր, հեղայր, սկիստայր, անեղ, հորեղբորդի, մորեղբորդի, լոռնեղի, ներ, ձագրոռնեայ) с соответствующими синонимами, показывает, что:

а) абсолютное большинство слов индоевропейского происхождения;

б) каждый денотат первичных отношений родства обозначается приблизительно 7.5 словами; вторично опосредствованный денотат—1,5 словами, а третично опосредствованный денотат—0,07 словами;

в) термины первичного родства и слова հարսն, փեսայ выделяются широкими словообразовательными возможностями, метафорическим-метонимическим употреблением, синонимами и стабильны до наших дней;

г) истинно однозначны и стабильны термины свойственного родства;

д) некоторые деривативы терминов родства выражают существование, отсутствие, кандидатство родственника или относятся к приемному (юридически-моральному, религиозно-этнографическому) родству.

²⁴ Ամուսնու ընտանիքում ապրող բոլոր անդամների անունների ստույգ հնդեվրոպական ծագումը մի անգամ ևս հավաստում է հնդեվրոպագիտության մեջ ընդունված այն դրույթը, որ գեղեկ հնդեվրոպական ընդհանրության շրջանում հաստատված է հայրիշխանություն և մոնոգամ բնույթի, թեև ազգակցության որոշ տերմինների նախնական իմաստը կրում է հնագույն մայրիշխանության հետքեր: